ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5426-Ա « 06 » նոյեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի Հ.5091-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 22.10.2026թ. հ.20-Ել-100601 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Վարսիկ Ղազարյանի 25.10.2024թ. հ.Դ-136205-24 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 22-ի «Նորագյուղ թաղամասի հ.211 բնակելի տան նկատմամբ Լևոն Զոհրաբի Ղազարյանի, Վարսիկ Զոհրաբի Ղազարյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.5091-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վերականգնել Նորագյուղ թաղամասի հ.211 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վարսիկ Զոհրաբի Ղազարյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 253.04քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 253.04քմ (որից 8.04քմ մակերեսով հողամասն ընդհանուր համատեղ սեփականություն է Սամվել Զոհրաբի Ղազարյանի, Քրիստինա Արիսի Սևոյանի հետ, իսկ 37.3քմ՝ Ռուբեն Զոհրաբի Ղազարյանի, Նաիրա Միշայի Տիշինյանի հետ) մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:»,

2) Որոշման վերնագրից, 5-րդ կետից հանել «Լևոն Զոհրաբի Ղազարյանի» բառերը,

3) Որոշման նախաբանից հանել «Լևոն Զոհրաբի Ղազարյանի (ծնված 19.03.1954թ.)» բառերը,

4) Որոշումը լրացնել նոր 1.1 կետով հետևյալ խմբագրությամբ.

«1.1 Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա Երևան քաղաքի Նորագյուղ թաղամաս հ.211 հասցեում գտնվող 253.04 քառ.մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:»:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ